

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր

(տևողությունը՝ 180 րոպե)

IX դասարան

1. «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վիպերգը: Իրականն ու առասպելականը վիպերգում:
Ո՞վ է վիպերգի պարտված հերոսը:

5մ.

2. Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց»-ի գրության ժամանակաշրջանը:
Փարպեցու և Վահան Մամիկոնյանի կապը: Փարպեցին Էջմիածնի մատենադարանի
հիմնադիր:

5մ.

3. Ո՞վ է քառատողի հեղինակը: Ներկայացրո՛ւ այն հեղինակին, ում նվիրված է
քառատողը. այդ հեղինակի ո՞ր ստեղծագործությունն է հայ նոր գրականության
զարգացման ծրագրային ուղենիշը, ինչու՞:

Քո պատվանդանը փոքր էր չափազանց,
Բայց մե՞ծ էր արդյոք հերկը հայրենի,
Որի բարգավաճ գալիքին ընծա
Դու հանճարը քո և կյանքը բերիր:

5մ.

4. Պատմի՛ր մեր էպոսի՝ քո սիրած հերոսի մասին՝ հարազատ մնալով բնագրին: Ըստ
քեզ՝ ո՞ր հերոսն է ապրում մեզ հետ մեր ողջ կյանքում:

5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան